ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 13/2026/Վ/Վ

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 8 հունիսի 2026 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի հունիսի 1-ին Հանձնաժողով մուտքագրված՝ քաղաքացի Դավիթ Տուրյանի դիմումը (այսուհետ՝ Դիմում)՝ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտում թույլ տալու վերաբերյալ,

ՊԱՐԶԵՑ

1. Ըստ Դիմումով ներկայացված տեղեկատվության՝

1.1 Դիմումի համաձայն՝ 2026 թվականի մայիսի 28-ին Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում տեղի է ունեցել Հանրապետության օրվան նվիրված զորահանդես, որն ուղիղ հեռարձակմամբ ցուցադրվել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ կողմից վարվող «Առաջին ալիքի» և «Առաջին լրատվական ալիքի» եթերում, տվյալ ալիքների համացանցային կայքերում, ինչպես նաև մասնավոր զանգվածային լրատվության միջոցներով: Դիմումով նշվել է, որ վերոգրյալից կարելի է ենթադրել, որ տվյալ զորահանդեսը ստացել է հանրային մեծ

արձագանք, այսինքն՝ մեծ քանակությամբ մարդ է այն նայել, բացի այդ, մի շարք քաղաքացիներ անձամբ ներկա են եղել տվյալ զորահանդեսին:

1.2 Դիմումի համաձայն՝ նշված զորահանդեսին մասնակցել են նաև մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, որի, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի կոստյումներին երևացել է ՀՀ քարտեզի տեսքով կրծքանշան: Դիմումով նշվել է, որ ներքաղաքական համատեքստում խնդիր է առաջանում՝ առավել ևս հաշվի առնելով, որ 2026 թվականի փետրվարի 6-ին ՀՀ նախագահի կողմից «Ազգային ժողովի հերթական ընտրություն նշանակելու մասին» ՆՀ-21-Ն հրամանագրի ստորագրումից և հրապարակումից մեկ օր անց ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետությունը գտնվում է նախընտրական շրջանում:

1.3 Դիմումի համաձայն՝ նշված կրծքանշանը հասարակության լայն շրջանակների մոտ ասոցացվում է հենց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ այն պատճառով, որ տվյալ կուսակցությունն այդ կրծքանշանն օգտագործում է նախընտրական քարոզչության ժամանակ և մինչև քարոզչության սկիզբը, այն հրապարակային կրում են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամները և քարոզարշավի ժամանակ նախընտրական նյութերին զուգահեռ առաջարկում քաղաքացիներին: Դիմումով նշվել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամները տվյալ կրծքանշանն ասոցացնում են իրենց կողմից ստեղծված և որդեգրված «Իրական Հայաստանի» քաղաքական գաղափարախոսության հետ, որով նրանք հակադարձում են իրենց ընդդիմադիր, այդ թվում՝ 2026 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող քաղաքական որոշ ուժերի, որոնք, համաձայն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամների մեկնաբանության, հակադարձում են տվյալ գաղափարախոսությանը և չեն ճանաչում այն իրողությունը, որ Հայաստանի Հանրապետությունն իր միջազգայնորեն ճանաչված 29.743 քառ. կմ տարածքով սուվերեն պետություն է:

1.4 Դիմումով նշվել է, որ վերոնշյալից ենթադրելով՝ կարելի է ասել, որ տվյալ կրծքանշանը, որը զորահանդեսին կրում էր, այդ թվում նաև, ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ոչ թե ուղղակի գարդերոբի մաս է, այլ կոնկրետ քաղաքական ուժի սիմվոլիկա, մերչ: Այսինքն, կարելի է ենթադրել, որ ՀՀ նախագահը կրում էր կոնկրետ քաղաքական ուժի հետ ասոցացվող սիմվոլ, որը հստակ երևում էր և՛ տվյալ զորահանդեսին անմիջապես ներկա քաղաքացիներին, և՛ այն քաղաքացիներին, որոնք տվյալ զորահանդեսին հետևում էին հեռավար:

1.5 Դիմումով վկայակոչվել են ՀՀ Սահմանադրության 123-րդ հոդվածի 3-րդ մասը, 124-րդ հոդվածի 5-րդ մասը և 127-րդ հոդվածի 3-րդ մասը և նշվել է, որ ՀՀ նախագահի պաշտոնն ստանձնելիս Վահագն Խաչատուրյանը 2022 թվականի մարտի 13-ին Ազգային ժողովի հատուկ նիստում երդվել է հավատարիմ լինել ՀՀ Սահմանադրությանը, իր լիազորություններն իրականացնելիս լինել անաչառ, առաջնորդվել միայն համապետական ու համազգային շահերով և իր ողջ ուժը ներդնել ազգային միասնության ամրապնդման գործում: Դիմումով նշվել է, որ վերոգրյալից բխում է, որ ՀՀ նախագահն իր լիազորությունների կատարման ժամանակ պարտավոր է լինել անաչառ, որը, համաձայն Է.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»՝ նշանակում է 1. ոչ աչառու, արդարամիտ, անկողմնակալ, 2. անաչառությամբ կատարված, անաչառություն արտահայտող, 3. (հնց.) չակնածող, համաձայն ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Հ.Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի կողմից կազմված «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի՝ անկողմնապահ, ոչ աչառու, արդարամիտ, համաձայն Ա.Մուրադյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանի»՝ 1. անկողմնակալ, անկողմնապահ, անկանխակալ, օբյեկտիվ: 2. արդար, արդարացի, արդարադատ, արդարամիտ, ճշմարտադատ, ճշմարտախոհ, ճշմարտախորհուրդ, ճշմարտասեր, շիտակ, շիտակամիտ, ուղղադատ, ուղղախոհ, ուղղամիտ, արդարախոհ, արդարակշիռ, արդարակորով, արդարասեր, իրավադատ, իրավախոհ, իրավասեր, իրավարար, օրինապահ, աննախապաշար, անկաշառ, անշահախնդիր, անկաշառելի, (գրբ.) անակնառու, անաչառելի, արդարախորհ, արդարահայաց, անհակատուր,

հավասարադատ, հավասարատես, ստուգակշիռ, քաջահամարձակ, անկողմնասեր, իսկ համաձայն Ա.Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանի»՝ անկողմնակալ, անկողմնապահ, անկանխակալ, անկաշառ, անշահախնդիր, աննախապաշար, անկողմնասեր, արդարամիտ, արդարադատ, հավասարադատ, ուղղադատ (օբյեկտիվ, ոչ աչառու, ոչ կողմնակալ):

1.6 Դիմումի համաձայն՝ քաղաքական համատեքստում «անաչառ» բառը նշանակում է մարդ, ով չի հանդիսանում, ավելին՝ իրավունք չունի հանդիսանալ որևէ քաղաքական ուժի կողմնակից և չի աջակցում, ավելին՝ իրավունք չունի աջակցել որևէ քաղաքական ուժի:

1.7 Դիմումով նշվել է, որ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ՀՀ նախագահը պետք է լինի անաչառ, այսինքն՝ չպետք է հանդիսանա որևէ քաղաքական ուժի կողմնակից և չպետք է աջակցի որևէ քաղաքական ուժի, սակայն Վ.Խաչատուրյանի կողմից ՀՀ քարտեզի տեսքի կրծքանշանը հրապարակային կրելը կարող է հակասել տվյալ սկզբունքին և քաղաքացիների կողմից կարող է մեկնաբանվել որպես ՀՀ առաջին դեմքի, երկրի գլխի, Սահմանադրության պահպանությանը հետևողի կողմից «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանն աջակցություն, ինչը, ըստ Դիմումի, հակասում է Սահմանադրության վկայակոչված դրույթներին և անաչառության սկզբունքին:

1.8 Դիմումով ներկայացվել է նշված դեպքը քննության առնելու և ՀՀ նախագահ Վ.Խաչատուրյանի կողմից ՀՀ Սահմանադրությամբ սահմանված անաչառության սկզբունքի ենթադրյալ խախտման հանգամանքը քննելու պահանջ, ինչպես նաև խախտումը հաստատվելու դեպքում վարչական սանկցիա նշանակելու պահանջ:

2. Դիմումի ուսումնասիրության արդյունքում վեր հանված փաստական հանգամանքները, կիրառելի օրենսդրական կարգավորումները և դրանց հիմքով վարույթի հարուցումը մերժելու հիմնավորումները

2.1 Ազգային ժողովի՝ 2022 թվականի մարտի 3-ի ԱԺՈ-27-Ա որոշման համաձայն՝ Վահագն Խաչատուրյանն ընտրվել է Հանրապետության նախագահ և պաշտոնավարում է մինչ օրս:

2.2 ՀՀ Սահմանադրության 123-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանրապետության նախագահը պետության գլուխն է:

2. Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը:

3. Հանրապետության նախագահն իր լիազորություններն իրականացնելիս անաչառ է և առաջնորդվում է բացառապես համապետական և համազգային շահերով:

(...)»:

2.3 ՀՀ Սահմանադրության 124-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.

«5. Հանրապետության նախագահն իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ:»:

2.4 ՀՀ Սահմանադրության 127-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«3. Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է Ազգային ժողովի հատուկ նիստում, ժողովրդին տրված հետևյալ երդմամբ. «Ստանձնելով Հանրապետության նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, իմ լիազորություններն իրականացնելիս լինել անաչառ, առաջնորդվել միայն համապետական ու համազգային շահերով և իմ ողջ ուժը ներդնել ազգային միասնության ամրապնդման գործում»:»:

2.5 ՀՀ Սահմանադրության 140-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանրապետության նախագահն անձեռնմխելի է:

2. Հանրապետության նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար:

3. Իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար Հանրապետության նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել միայն իր լիազորությունների ավարտից հետո:»:

2.6 ՀՀ Սահմանադրության 141-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար:

2. Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է Սահմանադրական դատարան:

3. Ազգային ժողովը Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշում է կայացնում Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:»:

2.7 «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 151-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանրապետության նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման համար:

2. Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը:

(...)

3. (...) Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն ստանալու համար, Ազգային ժողովը, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, դիմում է Սահմանադրական դատարան, և հարցի քննարկումն ընդմիջվում է մինչև Սահմանադրական դատարանի եզրակացության ստանալը: Եթե Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշումը չի ընդունվում, ապա նախագիծը հանվում է շրջանառությունից: (...)»:

2.8 «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի համաձայն.

«1. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան կարող է դիմել Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ՝ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի մասին Ազգային ժողովին հայտնի դառնալուց հետո՝ ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում:

2. Ազգային ժողովն իր որոշման մեջ պետք է մատնանշի Հանրապետության նախագահի այն իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որում առկա են պետական դավաճանության կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման հատկանիշներ:

(...)

7. Սույն հոդվածում նշված գործերով ապացուցման բեռը կրում է դիմող կողմը:

(...)

9. Գործը դատաքննության նախապատրաստելիս Սահմանադրական դատարանը կարող է ձևավորել աշխատանքային խումբ իր տված հանձնարարականների հիման վրա գործի առանձին հանգամանքներ պարզելու նպատակով, ինչպես նաև իրավասու մարմիններին կարող է հանձնարարականներ տալ տվյալ գործին առնչվող որոշակի հանգամանքներ պարզելու համար:

10. Սույն հոդվածում նշված գործերի քննության ընթացքում Սահմանադրական դատարանը կամ աշխատանքային խումբն իրավասու է՝

1) դատական, դատախազական, քննչական մարմիններից, պետական այլ մարմիններից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջելու իրենց տրամադրության տակ գտնվող նյութեր, քաղաքացիական, վարչական գործեր, քրեական վարույթի նյութեր, դատավճիռներ, վճիռներ, որոշումներ, տեղեկանքներ և այլ նյութեր.

2) պատվիրելու փորձաքննություններ և ստանալու եզրակացությունները.

3) հրավիրելու և լսելու այն անձանց, որոնց բացատրությունները կարող են նշանակություն ունենալ գործով կայացվելիք եզրակացության համար:

11. Դատական նիստը բացվելուց հետո Ազգային ժողովի ներկայացուցիչը ներկայացնում է դիմող կողմի դիրքորոշումը, որից հետո ներկայացված փաստերի առնչությամբ իր դիրքորոշումն է հայտնում Հանրապետության նախագահը կամ նրա ներկայացուցիչը: Դրանից հետո կատարվում է ապացույցների հետազոտում: Նիստի վերջում եզրափակիչ խոսքով հանդես են գալիս դիմող կողմը, որը կարող է պնդել իր դիմումը կամ հրաժարվել դրանից, և Հանրապետության նախագահը կամ նրա ներկայացուցիչը, որին տրամադրվում է պաշտպանությամբ հանդես գալու հնարավորություն: Հանրապետության նախագահը կամ նրա ներկայացուցիչն ունի վերջին ելույթի իրավունք: Վերջին ելույթից հետո Սահմանադրական դատարանը կարող է սույն օրենքով նախատեսված կարգով աշխատակարգային որոշում ընդունել գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ, իսկ այդպիսի որոշում չընդունվելու դեպքում նիստը նախագահողը հայտարարում է գործի քննության ավարտի մասին:

(...)

14. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ եզրակացություններից մեկը.

1) Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի բացակայության մասին.

2) Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին:

(...)

16. Սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված եզրակացությունում Սահմանադրական դատարանը պետք է նշի՝

1) Հանրապետության նախագահի այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են պետական դավաճանության կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության հատկանիշներ և այդ հանցագործության որակումը կամ այն իրավական ակտերը, գործողությունները կամ

անգործությունը, որոնցում առկա են Սահմանադրության կոպիտ խախտման հատկանիշներ.

2) սույն մասի 1-ին կետում նշված արարքներում Հանրապետության նախագահի մեղավորությունը հաստատող ապացույցները և դատարանի պատճառաբանված դիրքորոշումը դրանց գնահատման վերաբերյալ: (...)»:

2.9 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«3. Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:»:

2.10 Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«2. Պետական քաղաքական պաշտոններն են Հանրապետության նախագահի (...) պաշտոնները, (...) :»:

2.11 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(...)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները:

(...)»:

2.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

«1. Հանձնաժողովը՝

1) քննում և լուծում է (...) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ: (...)»:

2.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարույթ կարող է հարուցվել՝

1) յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա, իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի դիմումի հիման վրա.

(...):

2. Հանձնաժողովը (...) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ: Սույն մասի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա:

(...)»:

2.14 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 30-րդ հոդվածի համաձայն.

«1. Դիմումը վերադարձնելու կամ վարույթի հարուցումը մերժելու մասին Հանձնաժողովն ընդունում է որոշում դիմումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

(...)

3. Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝

1) դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր.

2) դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից.

3) սույն օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում դիմումը ներկայացրել է ոչ շահագրգիռ անձը.

4) նույն անձի վերաբերյալ նույն հիմքով առկա է Հանձնաժողովի եզրակացություն:

4. Սույն հոդվածով նախատեսված որոշումները եռօրյա ժամկետում ուղարկվում են դիմողին:»:

2.15 Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով սահմանված՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) 1-ին կետի համաձայն.

«1. (...) կանոնագիրքը վարքագծի կանոնների ամբողջություն է, որով պետք է առաջնորդվեն հանրային պաշտոն զբաղեցնող անձինք:»:

2.16 Կանոնագրքի 56-րդ կետի համաձայն.

«56. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր պաշտոնեական (ծառայողական) պարտականություններն իրականացնելիս դրսևորել անաչառություն,

զերծ մնալ խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց, գործել այնպես, որ նման կասկած չհարուցվի կամ ողջամտորեն նման տպավորություն չստեղծվի:»:

Ուսումնասիրելով Դիմումը և դրանից բխող պահանջներին վերաբերելի օրենսդրությունը՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Դիմումի համաձայն՝ Հանրապետության նախագահը խախտել է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ անաչառություն դրսևորելու պահանջը: Նկատի ունենալով, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝ իրենց պաշտոնեական պարտականություններն իրականացնելիս անաչառություն դրսևորելու պարտականությունը նախատեսված է Կանոնագրքի 56-րդ կետով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Դիմումով ներկայացված փաստական հանգամանքները պետք է քննարկվեն վարքագծի կանոնի ենթադրյալ խախտման համատեքստում:

Միաժամանակ, Հանձնաժողովն ընդգծում է, որ Հանրապետության նախագահի կողմից վարքագծի կանոնների ենթադրյալ խախտման հարցի քննարկումը պետք է դիտարկվի՝ հաշվի առնելով Հանրապետության նախագահի սահմանադրական հատուկ կարգավիճակը և դրանով պայմանավորված՝ Սահմանադրությամբ նրան ընձեռնված անձեռնմխելիության շրջանակը:

Այսպես, Սահմանադրության 123-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահը պետության գլուխն է և հետևում է Սահմանադրության պահպանմանը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով ընդգծվել է Հանրապետության նախագահի հատուկ դերակատարությունն ու նշանակությունը: Մասնավորապես, նշվել է, որ Հանրապետության նախագահի հիմնական առաքելությունը պետք է լինի Սահմանադրության պահպանմանը հետևելը, հակակշռող և զսպող լիազորությունների արդյունավետ գործադրումը: Հայեցակարգով նաև նշվել է, որ Հանրապետության նախագահը նոր (2015թ. փոփոխություններով սահմանված) լիազորություններով կլինի վերկուսակցական անաչառ արբիտր, որը կստանձնի հաշտարարի ու միջնորդի դեր՝ ունենալով երկրի զարգացման դինամիկ հավասարակշռությունն ապահովելու կարևոր առաքելություն:

Ընդ որում, հայեցակարգով ընդգծվել է նաև քաղաքական ուժերից Հանրապետության նախագահի լիակատար անկախության ապահովման կարևորությունը:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրում է, որ որպես պետության գլուխ և Սահմանադրության պահպանմանը հետևելու առաքելությամբ օժտված պաշտոնատար անձ՝ Հանրապետության նախագահն առանձնահատուկ դերակատարություն ունի սահմանադրական կարգի պահպանման, սահմանադրական մարմինների միջև փոխհարաբերությունների հավասարակշռման հարցում: Ընդ որում, որպես վերկուսակցական անկախ պաշտոնատար անձ՝ Հանրապետության նախագահը պետք է օժտված լինի հանրային իշխանության այլ մարմիններից բավարար անկախությամբ, ինչը թույլ կտա նրան անկաշկանդ կերպով իրականացնել իր լիազորությունները՝ առաջնորդվելով բացառապես ՀՀ Սահմանադրությամբ:

Վերոնշյալը հաստատվել է նաև Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ ՍԴՈ-1476 որոշմամբ, որով արձանագրվել է, որ Հանրապետության նախագահը կարևորագույն սահմանադրական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ է, որին Սահմանադրությունն օժտել է անձեռնմխելիությամբ՝ նրա բնականոն և արդյունավետ գործունեությունը երաշխավորելու, նրա լիազորություններին ոչ իրավաչափ միջամտություններից և անհիմն հետապնդումներից պաշտպանելու նպատակով:

Մասնավորապես, Սահմանադրության 140-րդ հոդվածով սահմանվել է, որ Հանրապետության նախագահն անձեռնմխելի է և իր լիազորությունների ժամկետում ու դրանից հետո **չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար:**

Նմանապես, Սահմանադրությամբ նախատեսվել են Հանրապետության նախագահի պաշտոնանկության հիմքերը և բարդեցված ընթացակարգ՝ միաժամանակ օրենսդիր և դատական իշխանության մարմինների ներգրավմամբ՝ նպատակ ունենալով երաշխավորելու Հանրապետության նախագահի՝ որպես

Սահմանադրության պահպանման առաքելությամբ օժտված պաշտոնատար անձի, անխոչընդոտ և անկաշկանդ գործունեությունը:

Մասնավորապես, Սահմանադրության 141-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահը **կարող է պաշտոնանկ արվել** պետական դավաճանության, այլ ծանր հանցագործության կամ **Սահմանադրության կոպիտ խախտման համար:** Նույն հոդվածով նախատեսվում է, որ պաշտոնանկ անելու **հիմքերի առկայության մասին եզրակացություն** ստանալու համար **Ազգային ժողովը դիմում է Սահմանադրական դատարան:**

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 151-րդ հոդվածով ամրագրվել են այս ընթացակարգի մանրամասները և սահմանվել է, որ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե Սահմանադրական դատարանի եզրակացությամբ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերը բացակայում են, ապա **այն փաստերը, որոնք հերքվել են Սահմանադրական դատարանի որոշմամբ**, Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու մասին Ազգային ժողովի նախագծի հիմքում չեն կարող դրվել:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը Սահմանադրական դատարան դիմելու մասին իր որոշման մեջ պետք է մատնանշի Հանրապետության նախագահի այն իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որում առկա են պետական դավաճանության կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության կամ **Սահմանադրության կոպիտ խախտման հատկանիշներ:** Նույն հոդվածի համաձայն՝ որոշմանը պետք է նաև կցվեն Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերը հավաստող ապացույցներ, իսկ ապացուցման բեռը կրում է դիմող կողմը:

Ընդ որում, **Սահմանադրական դատարանն իրավասու է իրականացնել դեպքի հանգամանքների պարզմանն ուղղված գործողություններ՝** ձևավորելու

աշխատանքային խմբեր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջելու տեղեկատվություն, պատվիրելու փորձաքննություններ, հրավիրելու և լսելու անձանց:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածով նաև նախատեսվում է Սահմանադրական դատարանի՝ ապացույցների հետազոտում իրականացնելու լիազորությունը: Գործի քննության արդյունքում Սահմանադրական դատարանը կայացնում է Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին որոշում: Ընդ որում, եզրակացությունում պետք է նշվեն՝

1) Հանրապետության նախագահի այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են պետական դավաճանության կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության հատկանիշներ և այդ հանցագործության որակումը **կամ այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են Սահմանադրության կոպիտ խախտման հատկանիշներ.**

2) սույն մասի 1-ին կետում նշված արարքներում **Հանրապետության նախագահի մեղավորությունը հաստատող ապացույցները** և դատարանի պատճառաբանված դիրքորոշումը դրանց գնահատման վերաբերյալ:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության հիման վրա Հանձնաժողովն արձանագրում է, որ **Հանրապետության նախագահի պաշտոնանկության հիմքերի, այդ թվում՝ Սահմանադրության կոպիտ խախտման առկայությունը քննարկելու և հաստատելու իրավասությամբ օժտված է բացառապես Սահմանադրական դատարանը:**

Ընդ որում, Սահմանադրական դատարանը ոչ թե պարզապես գնահատում է, թե արդյոք Հանրապետության նախագահի՝ խնդրո առարկա արարքը հանդիսանում է Սահմանադրության կոպիտ խախտում, այլ **իրականացնում է գործի հանգամանքների ամբողջական քննություն և ապացույցների հետազոտում, ինչի**

հիման վրա նաև հավաստում է որոշակի փաստերի առկայությունը կամ բացակայությունը: Այլ խոսքերով, Սահմանադրական դատարանն իրականացնում է ոչ միայն արարքի որակում՝ տեսական մակարդակում, այլ նաև հավաքում, ստուգում և գնահատում է ապացույցներ, որոնց հիման վրա հաստատում կամ ժխտում է Հանրապետության նախագահի կողմից որոշակի գործողության կամ անգործության կատարումը՝ փաստական մակարդակում:

Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով ենթադրյալ խախտման հարցի քննարկմանը՝ հարկ է նախ նկատել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահի պաշտոնը պետական քաղաքական պաշտոն է: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածով սահմանվում է Հանձնաժողովի լիազորությունը՝ քննելու պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների դիմումներ:

Օրենքով նշված կանոնից սահմանված են բացառություններ, այսինքն, նախատեսված են այն պետական պաշտոնները, որոնց պարագայում Հանձնաժողովն իրավասու չէ հարուցելու վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ, սակայն նշված պաշտոնների թվում չի ներառվել Հանրապետության նախագահի պաշտոնը:

Միաժամանակ, Հանձնաժողովը կրկին ընդգծում է, որ ի տարբերություն այլ պետական պաշտոն զբաղեցնող անձանց, Հանրապետության նախագահն օգտվում է գործառութային բացարձակ անձեռնմխելիությունից, այն է՝ նա չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար: Ընդ որում, Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրության պահանջների խախտման քննության իրավասությունը շնորհված է Սահմանադրական դատարանին, որն այդ հանգամանքը պետք է գնահատի և եզրակացություն ներկայացնի խախտման առկայության ու կոպիտ լինելու վերաբերյալ՝ Ազգային ժողովի դիմումի հիման վրա:

Այս համատեքստում կարևոր է ընդգծել, որ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի կարգավորումներից բխում է, որ Հանձնաժողովի՝ վարքագծի

կանոնների խախտման առկայության մասին եզրակացությունը վարչական ակտ է, որը ենթակա է բողոքարկման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված օրինականության հիմնարար սկզբունքը՝ իր բազմաթիվ որոշումներում ձևավորել է իրավական դիրքորոշում վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի մասին՝ նշելով, որ բոլոր դեպքերում վարչական ակտը համարվում է իրավաչափ, եթե այն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել: Հետևաբար քննվող գործի շրջանակներում որևէ վարչական ակտի իրավաչափության վիճարկման պահանջի բացակայության պայմաններում դատարանն իրավասու չէ անդրադառնալ այդ հարցին, գնահատական տալ չվիճարկվող վարչական ակտի իրավաչափությանը, ինչպես նաև դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորությանը: Այլ կերպ՝ դատարանը պարտավոր է ձեռնպահ մնալ քննվող գործի շրջանակներում չվիճարկվող վարչական ակտի իրավաչափության կամ դրա՝ իրավական հետևանքներ առաջացնելու հնարավորության վերաբերյալ գնահատականներ տալուց (տե՛ս, օրինակ, Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Հրաչյա Քարամյանի թիվ ՎԴ/2068/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2009 թվականի որոշումը):

Սահմանադրական դատարանը ևս 2015 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ ՍԴՈ-1238 որոշմամբ փաստել է, որ առկա է չբողոքարկված ցանկացած իրավական ակտի, այդ թվում՝ անհատական վարչական ակտի իրավաչափության կանխավարկած, ինչը բացառում է չբողոքարկված ցանկացած իրավական ակտի իրավաչափությունը մեկ այլ գործի քննության ընթացքում գնահատելու հնարավորությունը՝ ելնելով վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքից:

Այսպիսով, վարքագծի կանոնների խախտման առկայության վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը վարչական ակտ է, որը անբողոքարկելի դառնալու պահից օժտված է իրավաչափության կանխավարկածով:

Ըստ այդմ, այն դեպքում, երբ Հանձնաժողովը կքննարկի Հանրապետության նախագահի կողմից վարքագծի կանոնների ենթադրյալ խախտման փաստը և այս առնչությամբ կկայացնի եզրակացություն, այն օժտված կլինի իրավաչափության կանխավարկածով, ինչը կսահմանափակի Սահմանադրական դատարանին Հանրապետության նախագահի պաշտոնանկության հիմքերի ստուգման քննության ընթացքում: Այսպես, Սահմանադրական դատարանը, հանդիսանալով Հանրապետության նախագահի պաշտոնանկության հիմքերի, այդ թվում՝ նրա կողմից Սահմանադրության կոպիտ խախտման առկայության ստուգման իրավասու միակ մարմինը, ստիպված կլինի Հանձնաժողովի եզրակացության հիման վրա հաստատված համարել Հանրապետության նախագահի կողմից Կանոնագրքով սահմանված անաչառություն դրսևորելու պահանջի խախտման փաստը, որը տվյալ դեպքում նույնանում է Սահմանադրությամբ նախատեսված անաչառության պահանջի հետ, և չի կարողանա իրականացնել ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրություն:

Հանձնաժողովն, այդպիսով, վարչական ակտ կկայացնի մի հարցի վերաբերյալ, որի պարզման հարցը, **ՀՀ Սահմանադրության համաձայն, վերապահված է բացառապես Սահմանադրական դատարանին:** Ավելին, Հանձնաժողովի եզրակացության բողոքարկման դեպքում վարչական դատարանը ևս անխուսափելիորեն բախվելու է Սահմանադրական դատարանի կողմից գնահատման ենթակա հարցը քննարկելու խնդրին:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովը կրկին ընդգծում է, որ պայմանավորված Հանրապետության նախագահի սահմանադրական հատուկ կարգավիճակով՝ Սահմանադրությամբ նախատեսվել է նրա պաշտոնանկության բարդեցված ընթացակարգ, որը ենթադրում է **միայն Սահմանադրական դատարանի կողմից պաշտոնանկության հիմքերի առկայությունը գնահատելու հնարավորությունը:** Անաչառություն դրսևորելու պարտականության խախտման հարցը՝ որպես Հանրապետության նախագահի՝ Սահմանադրությամբ նախատեսված

պարտականության խախտում, ևս ենթակա է գնահատման Սահմանադրական դատարանի նշված լիազորության շրջանակներում:

Ըստ այդմ, չնայած «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանրապետության նախագահի պաշտոնը չի նախատեսվել որպես վարքաձի կանոնների խախտման վարույթի սուբյեկտային կազմից բացառություն, Հանձնաժողովը գտնում է, որ Հանրապետության նախագահի կողմից անաչառություն դրսևորելու պարտականության ենթադրյալ խախտման հանգամանքի քննարկումն իր իրավասություններից դուրս է, քանի որ այս հարցի քննարկումը՝ որպես Սահմանադրության խախտում, վերապահված է բացառապես Սահմանադրական դատարանին:

Հանձնաժողովը նաև կարևորում է, որ Դիմումով ներկայացված՝ Հանրապետության նախագահի արարքը կատարվել է նրա կողմից ի պաշտոնե հանդես գալու ընթացքում, քանի որ սույն թվականի մայիսի 28-ին՝ Հանրապետության տոնին անցկացված զորահանդեսին Հանրապետության նախագահը ներկա է գտնվել ի պաշտոնե: Ըստ այդմ, նշված զորահանդեսին Հանրապետության նախագահի կողմից որոշակի հագուստի կրումը Սահմանադրության 140-րդ հոդվածի իմաստով նրա կարգավիճակից բխող գործողություն է, որի համար նա չի կարող ենթարկվել հետապնդման:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ իրավասու չէ քննարկելու Հանրապետության նախագահի կողմից անաչառություն դրսևորելու պարտականության՝ որպես վարքագծի կանոնի խախտման հանգամանքը և այս առնչությամբ հարուցելու վարույթ:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 30-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դավիթ Տուրյանի կողմից 2026 թվականի հունիսի 1-ին ներկայացված դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Դավիթ Տուրյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ